

18/315

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԱԽԱՔ

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅԱ ԸՐԴՅՈՒԹՅՈՒՆՆԻԹՅՈՒՆ  
ԺԱԳԱԾՈՒԹՅՈՒՆ ԿՈՄԻՍԱՐԻԵՏԸ

ԳԻՐՔ № 16

ԿԵՆՑԱՐԱՅԻՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԸ  
ՀՍԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵջ

ՏԵՐԵՊԱՐԱ

1298 թ.

84

292

1341

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

ՀՅՈՒՅԹԻ ՎՈՐԱԿԱՆ ՈՐԴՅՈՒԹՅՈՒՆ  
ԺՈՂՈՎՐԴԻՑՆ ԿԱՄԻՍԱՐԻՑՏԻ

ԳԻՐՔ № 16

119

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԸ  
ՀՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵջ



Հ Ա Ր Ե Վ Ո Ւ

1298 Թ.

## ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԸ ՀՈԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Կենցաղային հանցանքները, վորոտես հին կյանքի անտեսական ու կենցաղային պայմանների (ցեղ, միջնադարյան կարգեր) հետ կապված յերեսւյթ, կատարվում էն մեր Միության ազգային չառ ըրջաններում։ Այս բրոցյուրի մեջ մենք կիսուենք միայն այն կենցաղային հանցանքների մասին, վորոնք ուղղված են կնոջ աղառության և նրա արժանապատվության դեմ։

Ներկայումս աշխարհում միայն մի յերկիր կա, վորի որենքները վճռականապես աղառում են բանվորություն ու գեղջկուհուն այն բոլոր ասպարեզներում, վորտեղ նրանց ձնշել և այժմ ել ձնչում են բուրժուական որենքները։ Այդ—խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունն է։ Յեզ արդ հասկանալի յէ։ Կապիտալիզմը հիմնված է աշխատավորների ստրկացման ու շահագործման վրա և չի կարող չճնշել կնոջը։ Իսկ բանվոր գասակարգը, բնդհակառակը, դիտե, վոր ստրկությունից ու շահագործումից լիովին աղասագրվելու համար անհրաժեշտ և վոչնչացնել նաև կնոջ իրավաղրկությունը՝ ինչ ձեռվ ել վերջինը արտահայտվելու լինի։ Յեզ, իրոք, խորհրդային իշխանության առաջին իսկ որերից կինը—բանվորուհին ու գեղջեւ-

ՀԱՅՈՒԼԻԳՐԱՖԻ Ի ՏՊԱՐԱՆ  
ԹԱՏՎԵՐ 4291  
ԳՐԱԼԵՄ. 883 Բ. ՏԻՐԱԺ 1600



1349- Ա 9-1

չին—ժեր որենքների համաձայն լիակատար իրավունքասարություն ստացավ:

Ն. Լենինը, առել ե. «Կնոջը բացարձակագես սաստրագրալ վիճակի մեջ զնող որենքներից խորհրդային հանրապետության մեջ քարը քարի վրա չի մնացէլ, և Ժենք Հսկաբառությունը, առանց շափականցության կարող ենք տանը, վոր բացի խորհրդային Ռուսաստանից աշխարհում չկտ ուրիշ վոչ մի յերկիր, վորանդ կնոջ լիակատար իրավահամարաբություն լինի, և վորանդ կինը ստարացված չլինի, համակարես բնաանեկան կյանքում»: (1919 թ. Մոսկվայի աշխատավորուհիների կոնֆերենցիալում արտասահմած ձատից):

Այսպես են ժեր խորհրդային այն որենքները, վորոնք վերաբերում են կնոջը: Զե՞ վոր բավական չե լավ որենքներ համարակիեր. անհրաժեշտ ե, վորպեսզի արենքները խսկագես կիրարկվեն կյանքում: Իսկ մենք գիտենք, վոր միշտ այլպես չի լինում: Մենք այստեղ չենք բասում այն գեղքերի մտախ, յեր կնոջ պաշտպանության համար համարակիված որենքները ազգակի խախտում են մտանալոր և յերբեմն նուի պաշտպանար անձանց կողմից:

Այս տեսակեացից խորհրդային որենքի պաշտպան և հանգիսանում զատախազությունը, վորը կովում և որենքի վերսիցաւ խախտումների դեմ:

Մենք այստեղ նկատի անենք այն որյեկալիվ արգելքները, վորոնք կանգնած են կնոջ լիակատար ազատագրության ճանապարհի վրա և կապված են կյանքի տնտեսական ու կենցաղային պայմանների հետ: Դրանք այսպես կոչված՝ չին կենցաղի (ցեղ, միջնազարյան

կարգեր) մնացորդներն են: Հայտնի յի, վոր մեր Միունիան շատ ազգային չըջաններում, մասնավորապես, ԱՄֆիլ կաղմի մեջ մտնող հանրապետություններում (Ազգային կազմի մեջ մտնող հանրապետություններում) մինչեւ այժմ ել գոյություն ունեն կենցաղային և կրօնական սովորություններ, վորոնք հազարավոր տարիների ընթացքում ճնշել են աշխատավոր կանանց: Այդ սովորությունները ոյժմ ել գեռ գժվարացնում, խոնդարում են կնոջ սագասագրության գործը: Անցյալից մեզ ժառանգություն մնացած այնպիսի սովորությունները, ինչպես՝ զալիմը, բազմակինությունը, վաղաժամ տմուննությունը, կնոջը՝ հետն ամուսնանալու նպատակով վախցնելը և ալին, նվաստացնում են կնոջ արժանապատվությունը և նրան զրկում են ասարբական աղատությունից. կնոջ հետ մարդում են հակասակ նրա ցանկության ու կամքի, նյութական չափ ստանալով ի հաշիվ նրա արատության: Իզուր չեր, վոր ԽՍՀՄ կենապործկոմը անհրաժեշտ համարեց հասուեկ կոչով զիմել Սրբելքի ժողովարդներին, առաջարկելով անշեղ կիրազով հետեւ, վորպեսզի կյանքում կիրարկվեն կանանց իրավունքները ողաշտպանող որենքները, կովեր կնոջ սորեկացման բոլոր տեսակների դեմ և միջոցներ ձեռք տանել նրանց հասարակական որագործական կյանքին մտանակից գարձնելու համար:

Նկատի ունենալով այդ ակտի հսկայական նշանակությունը, բերենք նրա բարեկալությունը. —

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, —առված է այդ կոչի մեջ՝ մայնչացը ցարի, կապիտալիստաների, բեգերի (կուլակների) իշխանությունը և ազատազրոց խորհրդային Սրբելքի մնչված ժողովուրդներին

աղքային ձնչումից : Բանվորա-պյուղացիական իշխառ-նությունը մաքրեց ժողովուրդների յեղբայրական հա-մագործակցության ձանապարհը և նրանց համախմբեց՝ կազմելով ԽՍՀ Միաւթյուն :

Հետևելով ձնչած ժողովուրդների մեծ առաջնորդ և բարեկամ Անդրնի ավանդներին, Խորհրդային իշխառ-նությունը նպատակ է զրել բարձրացնել զարթեցներ աշխատավոր Ընդհանուր ժամանակակից ամենից ավելի սարկացած տարբերին—Արեւելքի աշխատավորուհիների բազմամի-լիոն մասսային և նրանց մասնակից դարձնել նոր կյան-քի կառուցման գործին :

Խորհրդական համբաւակառությունը գեռ Հոկտեմ-բերյան հեղափոխության որերին հուշակեց կնոջ լիա-կատար աղասազբության լուսնդը : Դանդաղ, սակայն անշեղ կերպավ բանվորա-պյուղացիական կառավարու-թյունը վերջին տարիների ընթացքում գործնական մի-ջոցներով իրականացրեց կանանց փաստական իրավա-չափասարությունը :

Հեղափոխության աղասազբական աղղեցության տակ արդեն շարժվել են արեւելյան ժողովուրդների կին մասսաները, միլիոնավոր աշխատավորների առաջ խրն-դիր և զրված ամեն կերպ աշխակցել են սժանդակել կնոջ աղասազբության գործին :

Սակայն, կնոջաղային և կրոնական նախապաշտ-մունքները (սպիրույթի իրավունք, աղաթ, շարիաթ) ։ վորոնք առանձին ուժով սարկացնում են Արեւելքի ժո-ղովուրդների կանանց, դժվարացրել են դժվարացնում են Արեւելքի աշխատավորուհու աղասազբության գործը :

Արեւելքի կնոջը վերջնականագես աղասազբելու համար անհրաժեշտ են նրա աղասազբության դործին մասնակից դարձնել Արեւելքի ժողովուրդների լայն մաս-սաներին : Ուստի, ԽՍՀՄ Կենտրոնակամը անհրաժեշտ է համարում աղքային հանրապետությունների և ինքնա-վար մարզերի ամբողջ բնակչության ուշադրությունը չրավիրել այն բանի վրա, վոր մինչև այժմ գեռ ուղրեկ ու թուրք, զրզը ու կալմիկ, թուրքմեն ու մոնղոլ, յակուտ ու բուրիաթ և խորհրդային արեւելքի մյուս կա-նայք չեն աղասազբաված դարավոր ձնչումից, վորը չիմնաված և հին սովորույթների վրա, և բալվարար չա-փակ չեն գրավված խորհրդային պետություն կառու-ցողների շարքերը :

ԽՍՀՄ Կենտրոնակամի նախազահությունը կոչ է անում խորհրդային Արեւելքի բոլոր աղգությունների աշխատավորներին անշեղ հետեւել, վորպեսզի կյանքում կիրարկվեն այն որենքները, վորոնք պաշտպանում են կնոջ իրավունքները, պայքարել նրա սորկացման բոլոր ձերի գեմ և ձեռք առնել բոլոր միջոցները Արեւելքի աշխատավորուհուն մասնակից անելու հասարակական ու քաղաքական կյանքին՝ պետական աշխատանքի բոլոր աստիճաններում :

ԽՍՀՄ Կենտրոնակամի նախազահությունը, ցանկա-նալով սպնել Արեւելքի ձնչած կնոջը իր աղասազբու-թյան համար մզկալ պայքարում, անհրաժեշտ է հա-մարում նորից հիշեցնել ու բացատրել Արեւելքի կնոջը այն իրավունքները, վորոնք տրված են յեղել նրան դեռ-ես Հոկտեմբերյան մեծ հեղեցիկացիան առաջին որե-րին և հետագայում ձետերպվել են խորհրդային ս-րենողբությամբ :

ԽՍՀՄ Սահմանադրության համաձայն Արեւելքի կինը վայելում և խորհրդային իշխանության բոլոր մտամբների մեջ ընտրելու և բնարդելու իրավունք, բացառություն չեն կազմում նույնիսկ ամենաբարձր պետական հիմնարկությունները։ Աշխատավոր կենը պետք է ոգտագործի այդ իրավունքը, նա պետք է մասնակցի խորհուրդների բնարդությանը և ակախի կերպով աշխատի այն բոլոր կազմակերպություններում։ վորոնց անդամ կընտրվի նա։

Արեւելքի կինը տպամարդկանց հետ համաստ վայելում և քաղաքացիական բոլոր իրավունքները և կրում է Քաղաքացիական Որենսպայով սահմանված պարտականությունները։ Նրան իրավունք է արվում տպատ կերպով իր համար այս կամ այն զբաղմունքն ու արհեստը ընտրելու, գույք ճեղք բերելու և ստարելու և որենքով սահմանված պարտավորությունները հանձն տոնելու։

Որենքը խիստ կերպով սպառժում է այն բոլոր անձանց, վարոնց թվում նաև մերձավոր ազգականներին, վորոնք կնոջը հարկադրում են ամուսնանալու իր կողքի հակառակ կամ նախքան չափահաս զառնալի։

Որենքը նմանապես պատժում է կնոջ հետ ամռանանալու նպատակով նրան վախցնողին, զիսալին (զալիմ) ավողին, մի քանի կին առնողներին և այլն. այս յիրենույթները կնոջ զարավոր ճնշման մեացորդներն են, վորոնք արգելը են հանդիսանում նրան կուլտուրական ու քաղաքական զարգացման և առաջադիմության զործում։

Բուրժուական որենքը խորություն և զնում որի-

նական և առողջինի զավակների միջև խորհրդային իշխանությունը, վերջ տալով այդ խորությանը, բոլոր դավակներին հավասար էրավունք և առլիս, իսկ կնոջը իրավունք և վերապահում յերեխայի հարից նյութական ապահովություն պահպանելու, անկախ այն հանդամանքից, թե այդ յերեխան տամարագրված կամ չտոմարագրված ամուսնությունից և ծննիկ, թե՝ պատահական կենակցությունից։

Միաժամանակ, ցանկանալով սկսության ըալ Արեւելքի կնոջը իր զավակներին ինսամելու գործում և մայրերի առողջությունը պահպանելու նպասակով՝ խորհրդագային իշխանությունը ազգային հանրապետությունների ու մարզերի բնակչությանը կոչ և անում կազմակերպելու մոր և մանկան տներ, մառերներ, մանկաներ, գաղութներ, մանկարարական կայաններ և այլն և յեզաները պահպանել, պետական բոլոր մարդինների միջոցով ամեն կերպ աջակցելով ու սժանդակելով նրանց։

Կազմակերպելով բնակչության մայրենի լեղիով զասավանողով զպուցների ու կըթական այլ հիմնարկների ցանց, խորհրդային իշխանությունը կոչ և անում ազգային հանրապետությունների ու մարզերի բնիկ աղպարնակությանը՝ յերիտասարդ սերունդը գաստիարակել կանանց ազատազրական պայքարի վոգով և աղջիկներին տղաների հետ հավասարակես տալ ընդհանուր որոֆեսոնալ զպուցներ, մասնակից գարձնել ակումբների և կըթական այլ հիմնարկների, ինչպես նաև պիոներական ու պատահեկական կազմակերպությունների աշխատանքներին։

Բնդունելով, վոր կնոջ լիտկառար ապաստգրությունը, հնարավոր և միայն նրա տնաեւապես անկախ լինելու գեղագում, խորհրդային իշխանությունը կոչ և անում տեղական հասարակական կազմակերպություններին եւ ամերի մեծ չափերով կանանց գրավել արտադրական արտելների և տեղական արդյունաբերական ձեռնարկությունների մեջ:

Խորհրդային իշխանության մարմինները ամրող գիտակից բնակչության աջակցությամբ պետք և սպան աշխատավորություն, վարուեազի նաև դառնա խորհրդական ու գործիությունների, արհեստակցական ու կոսողերութիվ կազմակերպությունների, վախոզնության կոմիտեների և հասարակական այլ կազմակերպությունների ակտիվ անդամների և հնարավորություն սահնա, վարուեազարդություն և աղատակալ, դատավաշտամանների կուլեգիայի անդամ կամ դատախաղ, մասանկցություն ունենալու կնոջ իրավական գրաւթյանը վերաբերող հարցերի լուծման մեջ:

ԽՍՀՄ Կենտուրծիոմի նախադահությունը առաջարկում և բոլոր մարմիններին լայն չափերով իրազեկ գործնել աղային հանրապետությունների ու մարզերի կանանց այն իրավունքների մասին, վոր հոկտեմբերյան հեղափոխությունը ավել և նրանց, ոյլ և այլ մասին, թե ինչ ձեռնույն պետք է պայքարել այդ իրավունքները խախոսդների գեմ, հանաձայն խորհրդադին ուրենքների. (ԽՍՀՄ Որ. Ժող. 1925 թ. № 9):

Այսպիսով, չին կենցազի մնացորդների ու եմ մշկող պայքարը կուսակցական մարմինների և խորհրդային իշխանության հերթական անելիքն եւ վորհան աշխա-

տամբոր մասամբերը շուտ ազատագրվեն ցեղական-ընտանեկան հին հարաբերություններից, հին կենցազի մնացորդներից, այնքան ավելի մեծ հաջողությամբ նըստանք առաջ կը չարժիվեն սոցիալիստական շինարարության ազիտով:

Այս բրոցտորի մեջ մենք կանգ կառնենք հին կենցազի այն մնացորդների վրա, վորոնք գոյություն ունեն մեզանում—Հայաստանում, ինչպես նաև այն միջացների վրա, վորոնց նորատակն եւ վերացնել այդ մըսացորդները:

Խորհրդային Իշխանությունը Հայաստանում այդ յերեալ յիշների ու մասաքարում և մի կողմից՝ քրեական ներգործության միջոցներով, յերբ կենցազային հանցանքները արդեն կատարված են, մյուս կողմից՝ կուլտուրական-սոցիալական միջոցներով, այսինքն՝ միջոցները և ձեռք առնում կնոջ կուլտուրական մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև նյութական գրությունը բարելավելու համար:

### Ա. ԿԵՆՑԱԶԱՅՑԻՆ ՀԱՆՑԱՅՑԻՔՆԵՐ.

1. Կենցը՝ նրա կամքին հակառակ հետև ամուսնամալու նպատակով առեվակեցիլու (փախցնելու) համար կիւրակվում է ազատությունից զրկել մինչև յերկու տասնի ժամանակով:

Սոցիալական պաշտպանության նույն միջոցներն են կիրարկվում նաև մեղակիցների նկատմամբ. (ՀՍԽՀ Քրեական Որենս. 188 հոդված):

Մինչեւ այժմ ՀՍԽՀ Հանրապետության սահմաններում բնակվող քարոզ, թուրք, յեղիկ և մասամբ նաև հայ բնակչության մեջ վոյություն անի աղայական սո-

վորություն, վորի համաձայն կանանց տոհանդում են, այսինքն՝ փախցնում են նրա կամքի հակառակ համամաւանալու համար:

Եռուհրդային իշխանությունը, նկատի ունենալով, վոր այդ յերեռությը տարածված և զյուղական կյանքում, խոսորեն պայքարում և նրա դեմ՝ կուրտուրական-կրթական միջոցների հետ միաժամանակ իշխանությունը սոցիալական պաշտպանության միջոցներ և կիրարկում կնոջը փախցնողի նկատմամբ:

Դեռ ևս 1927 թ. Հ. Ա. Խ. Հ. Կենտպորժկոմը Քրեական Որենսգրքի մեջ մոցրեց հասուեկ հսդիրած, վորի համաձայն այն անձինք, վորոնք կնոջը փախցնում են հակառակ նրա կամքի հետն ամուսնանալու համար, յենթարկում են ազատազրկության մինչև յերկու տարի ժամանակով։ Այս որենքը հրատարակելուց առաջ ել մեր զատարանները առիթ ունեցին պայքարելու կանանց առեանդելու յերեռութիւն դեմ, և փախցնողներին համարում եյին վորպես կնոջը բոնությամբ և ասլորինարար ազատությունից զրկողներ, նրանց յենթարկելով ազտագրկության մինչև մեկ տարի ժամանակով։ Պետք է նշել նաև այն հանդամնությունը, վոր զատարաննը, նպատակ ունենալով պաշտպանելու կնոջ ազատությունը և պայքարելով վերահիշյալ յերեռութիւն դեմ, չեր կարող նկատի չունենալ այս հարցի նաև կենցազային կողմքը։ Քեզ չեր պատահում, յերբ փախցնելը միայն ձեռկան բնույթ եր կրում և փաստորեն ուղղված եր լինում ծրանողների դեմ, վորոնք չեյին կամենում համաձայնություն տալ իրենց զարգացման մասնակից պատասխանակիցները, մեր փախցնելուց հետո կենք յենթարկվել և բռնարարման, թե վոչ բռնարարման զեպքում կիրարկում եյին նաև այն համապատասխան որենքները, վորոնց համաձայն պատասխանակիցները այս կամքում այն յենթարկվում այս կամքում համապատասխան կնոջ հետ սեռական հարարերություն ունեցողները։

Քրեական զործ սկսել կնոջը փախցնողի դեմ, քանի վորինը փաստորեն համաձայն եր ամուսնանալու իրեն փախցնողի հետ։ Ընդհակառակը, այն գեղքում, յերբ իսկապես բոնություն եր կատարված փախցրած կնոջ կամքի և անձի գեմ, թեկուղ ծնողները համաձայն լինելին հաջափելու առեանդման փաստի հետ՝ ամուսնության միջոցով ձեռկերպելով կատարված զեղքը, գատարանը քրեական զործ եր սկսում փախցնողի դեմ, և զատական զործերը հաճախ ցուցադրական բնույթ եյին կրում ազիտացիայի նորասակայի։

Իրենք—զյուղացիները և զեղջկուհիները մասնակցում եյին այդ զատավարություններին, վորոնք ժողովրդական առեանդմական կազմակերպությունները իրենց կողմից նշանակում եյին հասարակական ամրատանողները (մեղագրապներ)։ զտարանի վճիռները վոչ միայն հայտարարվում, այլ և բացատրվում եյին մասսաներին։ Գատարանները սացիալական պաշտպանության միջոց ընտրելիս նկատի եյին ունենում այն հանդամանքը, թե փախցնելուց հետո կենք յենթարկվել և բռնարարման, թե վոչ բռնարարման զեպքում կիրարկում եյին նաև այն համապատասխան որենքները, վորոնց համաձայն պատասխանակիցները այս կամքում այս կամքում այս կամքում համապատասխան կնոջ հետ սեռական հարարերություն ունեցողները։

Սոցիալական պաշտպանության նույն միջոցները կիրարկում են նաև հանցավործության մասնակիցների վերաբերմամբ։ մասնակից (զբուիչ և ոժանդակիչ) են համարկում այն անձինք, վորոնք իրենց խորհուրդներ

բով, ցուցումներով, միջացներ տրամադրելով և արգելներ վերացներ աջակցում են հ նպաստում հանցագործությունը գլուխ բերելուն և հանցավորին կամ հանցանքի հետքերը թագցնելուն:

Ա. Ծնողների, խնամակալների կամ ազգականների կողմից ամուսնական տարիքի հասած կնոջը իր կամքին հակառակ ամուսնանալուն բռնադատելու համար կիրակիում և ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով :

### (ՃՐ. ՈՐ. 189 ՀՈԴՎԱՄ:)

Ամուսնական տարիքի հասած աղջիկներին նրանց կամքին հակառակ ամուսնացնելու սովորությունը մինչև այժմ և գոյություն ունի թուրքերի, քրդերի, ասորիների, յեղիպների, իսկ մի քանի կուլտուրակառ հետամնաց չըջաններում։ (Դարալազյաղ, Շամշազին, Արարան և այլն) — նաև հայերի մեջ։ Այս լերեալիքը այն էին կենցաղի մնացորդն ե, յերբ կնոջ ծնողները, ինսմակալները կամ ազգականները, ինչպես կամնենում, այնպես ել վարփում էին նրա հետ, ամուսնացնում ելին նրան՝ ում հետ իրենք ելին ցանկանում, նյութական չահ սուհալով արդպիսի հարկադրական ամուսնությունից։

Խորհրդավին իշխանությունը, վորք թե ամուսնական և թե ընտանեկան ասպարեզում կնոջը հավաստըցը ել աղամարդու հետ, պայքարում և վերսէիցուց յերեւլիթների գեմ։ Հետապնում և այն անձանց, վորոնք կնոջը զրկում են իր համար ազատ կերպով վեստությունը ընտրելու հարաբուրությունից, վորոնք դրանով կնոջը պհանմ են անհավասար և սարկական վիճուկի մեջ։

Արբունիքի շիասած արական կամ իզական սեռի անձին ամուսնանալու համար, կամ յեթե այդ ամուննու յանությանը բռնադատում են ծնողները, խնամակալները կամ ազգակալները, կիրարկում են —

այս Որենպրքի 177 հոգվածի 1 և 2 մասերով և 178 հոգվածնի նախատեսված ոսցիալական պաշտպանության միջացները (Քրեական Որենպրքի 190 հոգված)։

(Քրեական Որենպրքի 177 հոգվածի 1 մասը նախատեսուած և ազատությունից զրկելը մինչև տիք տարի ժամանակով, իսկ 178 հոգվածի 2 մասը և 178 հոգվածը նախատեսուած են ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով)։

Մեր որենքը այսպիսի արարքների համար պատուանաւագության և յենթարկում վուչ միայն արդաւնքի շնորհ անձի հետ ամուսնացողներին, այլ նաև փոքրանակ անձի ծնողներին, ինսմակալներին կամ ազգականներին, վորոնք մեզանկիցների։

ՀՍԽՀ Ամուսնության, ընտանիքի և ինսմակալության որենպրքի համաձայն ամուսնական հասակը տըզամբարդկանց համար սահմանված և 18 տարին, իսկ կանանց համար — 16 տարին։ Ամուսնական այս տարիքը համապատասխանում և մեր յերեկը կենցաղային ու անտեսական պայմաններին ու մինչնույն ժամանակ ապահովում, պահպանում և ամուսնացողների և նրանց սերնդի առողջությունը։ Բանն այն է, վոր մեր գյուղացիական իրականության մեջ, մանականդ վերջերս, հաճախ են տեղի ունենում վաղ ամուսնության զեղքեր։

Այս յիրեւոյթը գյուղացիական ծխի մեջ ունի իր անոն-  
սական պատճառը։ Հայաստանում հոգը սակագ է և  
բաժանվում է ծխի անդամների թվի համեմատ։ այս  
նպատակով գյուղացիական ծուխը աշխատում է իր շնո-  
շերի թիվն ավելացնել, վարպետի գրանով մի չնչի հոգ  
ել ավելի ստանա։ և ահա, գյուղերում փոքրահասակ  
աղաներին վաղ ամուսնացնում են (առնը հարս րեբե-  
րու համար) կամ աղջիկներին մարզու յեն տալիս այն-  
պիսի անձանց, վորոնք մահում են նույն ծխի կազմի  
մեջ, վարպետ «տնիկնա»։ այսպիսով ավելացվում է  
ծխի անդամների թիվը։

Այս մի կողմից։ Մյուս կողմից՝ գյուղացիական  
ծխերը բավականաչափ աշխատող ձեռք չունենալու  
զեպքում զարձյալ դիմում են իրենց փոքրահասակ  
աղաներին ամուսնացնելու միջոցին, վարպետի ծխի  
կազմի մեջ մահաղ նոր անձը—հարսը, աշխատի անահ-  
առության զործերում։

Այս սովորույթը շատ մեծ չափերով տարածված է  
մեր գյուղերում, և այս հոգի վրա շատ ու շատ զեպքե-  
րում գյուղացիները իրենց փոքրահասակ աղանե-  
րին (12-14 տար.) ամուսնացնում են չափահաս կանանց  
հետ։ Այս և ահա վաղ ամուսնությանների ծագումը։  
Պարզ է, իհարկե, վոր մեր զատարանները քրեական  
ներդործության միջոցներով կովում են այդ յերեւոյթի  
զեմ, պատասխանակաւթյան յենթարկելով փոքրա-  
հասակներին ամուսնացնող։ Կրանով նրանց ֆիզիքա-  
պես վնասող անձանց։ Այսպիսի հանցանք կատարող-  
ները յենթարկվում են ազատազրկության մինչեւ հինգ

դամ մինչեւ ութ տարի ժամանակով, նայած զործի հան-  
դամանքներին։

IV. Հարանացուի համար նրա ծնողներին։ ազգականեն-  
ին կամ բարեկամներին վեսացուի, նրա ծնողների կամ  
բարեկամների կողմից դրամով, անառանեներով կամ այլ  
գույքով կամ թե անձնական աշխատանիքով փոխհատու-  
ցում տարձ համար (դալիմ) կիրարկվում է—

Ազատուրյունից զինելը մինչև յերկու տարի ժամանա-  
կով կամ տուգանի մինչև հինգ հարյուր ռուբլի։ Փոխ-  
հատուցում ընդունելու համար—նույն միջոցները՝ ան-  
կախ փոխհատուցումը բռնազրակելուց, և տուգանի  
փոխհատուցման չափով։

(Քր. Որ. 191 հոդ.)

Դալիմ տարձ սովորությունը զոյտթյուն ունի  
թուրք, քուրդ և յեղիպ բնակչության մեջ։ Այս տրարքի  
համար սոցիալական պաշտպանության միջոց և սոհ-  
մանված, նախ, այն պատճառով, վար զալիմը, վորպետ  
հարացնուի համար արվազ փոխհատուցում, նվասու-  
ցնում է կնոջը, սոսրացնում է նրա արժանապատվու-  
թյունը, և յերկրորդ՝ զալիմը վերոհիշյալ ազգություն-  
ների սովորություններից ամենավատթար սոցիալ-  
ական չարիքն է, վորովհետեւ զրամ, անառուն կամ այ-  
լույթ (զալիմ) սոսանալով՝ աղջկա ծնողները կամ հա-  
րացնուները պարագանը լին ացջկոնը հակառակ նրա  
կամքի ամուսնացները անողարկան այն մարզու հետ,  
վորից «զալիմը» սոսանալու հետ, և աթափիսով միաժամ-  
ակ աղջիկը—հարմատանք պահեացը և իր ծնողների և  
հարազանների մասշտանը յեկատաբ ավրաւը։ Ահա  
այս պատճառով ել որենքը թե զալիմ ավաղին և թե

ասնողին յենթարկում և սոցիալական պաշտպանության միջոցի անկախ այն բանից, թե ինչ ձեռք և վճարվում դալիմը:

Վ. Յերկինության կամ բազմակինության համար կիրարկում և ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով կամ տուգանիք մինչև ինք հարյուր ուրբի.

(Քր. Ար. 192 հոդված)

Յերկինությունն ու բազմակինությունը Հայաստանում ամենից հաճախ և ամենից ավելի պատահում են մահմեղականների մեջ, վորպես շարիաթի համաձայն կատարված կրօնական ամուսնություններ, պետք և առել, վոր յերկու կամ ավելի կին պահողները զիսավորապես թուրք, քուրդ և յեղիդ լուսկչության հարուստարերն են, այսինքն՝ կուլտակները, վորոնք նյութական հնարավորություն ունեն մեկի փոխարեն յերկու և ավելի կին պահելու, և վորոնք սպամելով հին կարգերի մնացորդ՝ շարիաթից և կրօնից, սորկացնում են կնոջ իրենց անձնական բագականության համար և անտեսական նորածակներով:

Յերկինության գեղքերը լինում են նաև հայերին մեջ, յերբ վյուղացին Զագսի միջոցով ամուսնանալուց և կին սոնելուց հետո, իր տնտեսությունը վարելու համար աշխատող ձեռքի կարիք և զգում և այդ նորածակով բարակուենի յե վարձում և ապա կենակցում և նըա հետ այսպիսով տապա և զալիս յերկրորդ փաստական ամուսնությունը:

Այսուղ պետք և հիշել, վոր մեր գատարանները այսպիսի գեղքերում պաշտպանում են և յերկրորդ փաստական կնոջ շահերը, վորի հետ կենակցել և ծխի

այս կամ այն անդամը. թեև առաջին կնոջ (առմարտղըրված ամուսնություն) գոյության դեպքում յերկրորդ կինը (փաստական ամուսնություն) իրավունք չունի ապրուստի միջոց պահանջելու, սակայն նա կարող է պահանջել, վորպեսզի նրան վճարվի այն աշխատանքի վարձը, վոր նա կատարել և գյուղացիական ծխի մեջ զանազան հոգուտ ծխի տնտեսություն:

Ինդհանբապես պետք և նկատել, վոր որենքը՝ հետապնդելով այսպիսի կենցաղային հանցանքները, նպատակ ունի քրեական միջոցներ կիրարկելով պայքարել յերկինության ու բազմակինության գեմ և վերացնել այդ յերեւոյթը, վոր կնոջ շահագործման մի ձևն և կուլտուրական հետամնացության և հին կարգերի մնացորդների պայմաններում:

VI. Արյան վրիժառություն.

Կունակ մի այլ կենցաղային հանցանք, վորը չի նախատեսված հատուկ որենքներով, —այդ արյան վրիժառության հողի վրա կատարվող սպամությունն է: Արյան վրիժառության սպամությունը թեև այնքան ել տարածված չե, սակայն գեռ պահպանվում և Հայաստանի մի քանի շրջաններում, ինչպես՝ Զանգիշասար, Վեղիբրասար, (Յերեանի գավառ) և այլն, վորտեղ ընակչության մեծ մասը թուրքեր են: Արյան վրիժառության հողի վրա կատարվող սպամությունների հիմք և ծառայում յուրահատուկ կենցաղային մի այլ յերեւոյթ, վորը կոչվում և «թայֆայականություն»:

Թայֆան կազմվում և մի խումբ ազգականներից, վորոնք կարող են իրենց նյութական վրությամբ բո-

լորովին տարբեր խմբերի պատկանել . թայֆայի մեջ կարող են ժամանել և՝ հարուստ և՝ միջակ և՝ աղքատ ազգականները . ինսամբությունը (կնոջ կազմից) նշանակություն չունի . հաճախ պատահում է , վոր կինը՝ ամուսնանալով հակառակ թայֆային պատկանալ այս կամ այն անձի հետ , կարում է իր կապերը հարազատների հետ : Բնդհանրապես թայֆայի զլուխ կանգնում է լինում ազգականներից վորեւ հարուստ , անահոսպես ուժեղ մեկը—կուլակը , վորը հանդիսանում է թայֆայի զեկավարը և վորովես թե՛ նրա «պատկվը» (նամաւոր) պաշտպանողը : Արտիստի թայֆան , հակառակ իր անդամների անահոսական տարրեր զբության ներքուստ մի ամբողջություն է կազմում : Այս հանդամանքը անողայման շատ նպաստավոր է թայֆայի զեկավարների համար , վորոնք շահագործում են թայֆան իրենց անձնական նյութական նպատակների համար : Արյան վրիժառությունը , վորոնք հին կենցաղի մեացորդ , թայֆայի զեկավարների ձեռքին մի ուժեղ զենք և մասսաների գասակարգային զիտակցությունը մթագներու համար :

Մեր զատարանները այս յերեալիի մեմ պայֆարելիս հավասարապես պատասխանավություն են յենթարկում այն բոլոր անձանց , սիրեր այս կամ այն կերպ ժամանակից են արյան վրիժառության հողի վրա կտարփող հանցանքներին , այսինքն՝ թե հանցանքը իսկապես կատարացներին և թե զրդիչներին ու զեկավարներին . զեկավարների նկատմամբ որոնքը , վորովոսցիական պաշտպանություն միջոց նորություն է—աղտատագրկություն մինչեւ տաս տարի ժամանակով .

ույսպիսի սպանությունները զատարանը համարում են (վորակում են) վորովոս սոսոր շարժառիթներով կատարված սպանություն (Քր . Ար . 162 հոդ .) :

Ի հարկե , այս կարգի հանցանքների զեմ միայն սպահարակոն պաշտպանության խիստ միջոցներով պայտարելը բավական չեւ պետք եւ աղիտացիոն լայն աշխատանք կատարել թայֆանները քանզելու , նրանց պատականող չքափուր ապրերի մեջ զատկարգային զիտակցություն զարթեցնելու համար , վորից հետո միայն թայֆան , վորովոս զյուղական կրանքի վասթար մեր յերեսույթ , կամաց—կամաց կիերանա :

Վերջացնելով կենցագային հանցանքների վերարելը մեր այս զբույցը , անհքաժեշտ համարում նշել , վոր մեր գատական մարմինները այդ հանցանքների զեմ կրվելու համար պետք եւ այսուհետեւ են նման զատերին ցուցագրական բնույթաման : Այժմ , յերբ կենցաղային հանցանքները նախառեալած են աւանձին որենքներով , և յերբ արդ զործերը յենթակա յեն ժողովրդական զատարաններին , պետք եւ զատավարությունը զավառակային կենարօններից փախուղել գյուղական վայրերը : Այս գեղգ պայտագի նաև զյուղական հասարակական ուժերին սպառագործել այդ զատավարության ժամանակ թե վորովոս ժապովագական առենակալներ , և թե վորովուս հասարակական մելազրողներ : Այս ձեռվ կազմակերպված զատավարությունները շատ մեծ սպիտակիոն համակառնություն կունենան :

Բ. Հին կենացարք ԴԵՄ ՊԱՏՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԵԿՈՒ  
ԱԹՆՎԱՐ ԿՈՒԼՏՈՒՐ-ԿՐԹՈՒԿԱՆ ՄԻԶԱՅՆԵՐԸ.

Ինչպես ասվեց վերեւում, Հին կենցաղի բացառության մնացորդների գեմ պայքարելու համար կանանց ազատազգությունը և քրեական միջոցները բավական չեն. պիտք եւ այդ պայքարին մասնակից գարձնել ոչ խառավորության լայն շերտերին, հասարակական կողմակերպություններին և առաջին հերթին՝ իրենց, ոչ խառավագոր կանանց:

Աշխատավորության լայն մասնակիցներին դրավելուր-  
հուրգների աշխատանքներին մասնակից գարձնելու ա-  
մենանպատճեաբահարմար միջոցը զյուղինորհուրգների  
կուլտուր-կրթական սեկցիաներն են, ինչպես նաև տ-  
խատավոր կանանց աշխատանքն ու կինցաղը լարելո-  
վող հանձնաժողովները։ Այս հանձնաժողովները կադ-  
մըված են գեռ անցյալ տարի Կենտրոնական կոմիտեն (կենտրո-  
նական) և գավգառքի կոմիտեին կից (տեղական)։

ի՞նչ անելիքներ ունեն կուլտ-կրթական սեկցիաները և աշխատավոր կանանց աշխատանքն ու կենցաղը բարելավող հանձնաժողովները հին կենցաղի գեմ պայտքարելու գործում և ինչ միջոցներով պետք և իրավուցեն նրանք այդ պայքարը։ Գյուղխորհուրդների կուլտուր-կրթական սեկցիաների աշխատանքներին, բացի խորհուրդների անդամներից, որեաք և մասնակցեն նաև լայն մասսաները՝ գյուղացիներն ու գեղջկուհիները, բարեկաներն ու բարեկուհիները, կուսակցական մարմինների, հասարակական կազմակերպությունների (կոոպերացիա, փոխողնության կոմիտե և այլն), զործարանային կոմիտեների ներկայա-

բացուցիչները և այլն։ Կուլտ-կրթական սովորական բացուցիչների մաս-  
կի առավոր անելիքն է—բարձրացնել աշխատավոր մաս-  
անձնելի ակտուալությունը և նրանց զարձնել հին կենցա-  
զի դեմ պայքարելու հետաքան։ Խոկ այս նպատակով  
կուլտ-կրթական սեկցիաները պետք է կյանքում կի-  
րարկեն այն միջոցները, վորոնք նպատակ ունեն  
կանոն տնտեսական ու իրավական անհավասարու-  
թյունը վերացնելու այսպիսով սեկցիաները նրանց  
մասնակից կանեն յերկրի պետական և տնտեսական շի-  
նարարության աշխատանքներին։ Այլ խոսքով տասձ՝

ա) կուլտուր-կրթական սեկցիաները պետք և զարգացնեն պրաֆեսիոնալ գոլոցներ, ակումբներ, կուլտուրական այլ հիմնարկներ և աղջկեներին ուղանելի միասնական տեղապահություն արձակութայի մեջ մտնելու համար։

բ) ըսյն չափերով աղիսացիոն աշխատանք կատարեն հիմն կեցաղի մնացորդների, այն է՝ բազմակության, յերկինության, գոլիմի, անշարժահասների հետ մուսնակալու և նման այլ յերկույթների դեմ պայքարելու համար:

գ) նյութական սպառություն ցույց տան իրենց ա-  
զատագրության համար պայքարելու հետեանքով նյու-  
թական ծանր կացության մեջ ընկած կանանց, տեղավո-  
րելով նրանց ձեռնարկություններում ու հիմնարկնե-  
րում, կաղմակի բարելով արտադրական դանազան ար-  
տեներ, արհեստանոցներ և այլն:

Բայցի այդ աշխատանքից կուլտ-կլիֆական սեկցիոն  
ները կոսպէրատիվ մարմինների և փոխողնության կո-  
միտեների միջացով պետք է թեթեացնեն կնոջ աշխա-  
տանքը, սոեղծելով աշխատանքի կոլեկտիվ ձևեր և  
տարածելով դյուդատնուհության ու անայնապոքութու-

թյան լուրելավված ձեւը : ԱԵկցիաները պետք ե զյու-  
ղական վայրերում կազմակերպեն ու ծագալեն աշխա-  
ռասխար մասսաներին իրավաբանական սպառություն-  
ցուց տալու դարձը , հատկապես այն չրջաններում ,  
վարսեր կուրտուրապես հետամնաց են : ԱԵկցիաները  
պետք ե սերտ կապ հաստատեն համապատասխան բան-  
գեղջրաժինների , պատզամտվորական ժողովների և  
այլ կազմակերպությունների հետ , ոգտագործելով  
նրանց՝ աշխատավոր կանանց չրջաններու ապրածելու , ու-  
րացատրելու համար խորհրդացին այն որենքները , վո-  
րոնք վերաբերում են կնոջ , մորուն հասարակություն-  
իրավահավասար անդամի՝ իրավունքների պաշտպա-  
հությանը :

Հին կենցաղի մնացորդների զեմ ոգայքարելու գոր-  
ծում կուրտ-կրթական աշխատանքը պետք ե շաղկապվի  
աշխատավոր կանանց աշխատանքն ու կենցաղը բարե-  
լավով հանձնաժողովների աշխատանքի հետ :

Այսուղ մենք կանգ չենք տանում այն միջացների-  
վրա , վոր ձեռք են տանում այդ հանձնաժողովները  
կնոջ աղասագրության համար մզիսկ ոգայքարի աս-  
պարեզում . այդ միջացները նույն կուրտուր-կրթական-  
միջացներն են , վոր կերտորկում են կուրտ-կրթական  
սեկցիաները :

Միոյն այդ սեկցիաների սիստեմատիկ աշխատան-  
քը և հասարակական և կուսակցական կազմակերպու-  
թյունների , ինչպես նաև խորհրդային մարմինների ա-  
ջակցությունը հնարավորաթյուն կատան կամաց-կամաց  
վերացնելու հին կենցաղի մնացորդները և այդ մնա-  
ցորդների հետ կապված չափումնեն վաճանակար ա-  
րարքները :

## ՀԱԽՑ ԱՐԴԺՈՂՎՈՍԱՏԻ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀՍԽՑ Սահմանադրություն (մատ. պարզաբ.)
2. Նույնը — թուքերեն
3. ա) Կանոնադրություն քաղխորհութիւնի իրավունքը-  
ների և պարտականությունների մասին.  
բ) Հրահանգ գյուղխորհութիւն սեկցիաների մասին.  
գ) Կանոնադրություն գյուղխորհութիւն վերստ. հանձ.
4. Հրահանգ քաղ. և զյուղ. խորհութիւնների ընտրությունների  
և խորհուրդների համագումարների հրավիրելու մասին.
5. Նույնը — թուքերեն
6. Նույնը — սռուսերեն
7. Գյուղխորհութիւնների զատական սեկցիաների մասին (մատ-  
չելի պարզաբ.).
8. Գյուղխորհութիւնների իրավունքներն ընդլայնելու մասին  
(մատչ. պարզաբ.).
9. Ամուսնության, ընտանիքի և խնամակալության մասին  
(մատչ. պարզաբ.).
10. Նոր բնակարանային որենք (մատչ. պարզաբ.).
11. Գյուղխորհութիւնների զատական սեկցիաների մասին (թուքք.).
12. Գյուղխորհութիւնների իրավունքներն ընդլայնելու մասին  
(մատչ. պարզաբ.) թուքքերեն.
13. Ամուսնության, ընտանիքի և խնամակալության Որենու-  
գիքք — թուքքերեն.
14. Մամնավոր բնակարանային շնորհաբառությունը և խորհր-  
դային որենուգրառությունը (մատչ. պարզաբ.).
15. Ավ և զատախաղը և ինչ աշխատանք և կատարում նա  
զյուղում (մատչ. պարզաբ.).
16. Կենցաղային հանցանքները ՀԱԽՑ Հանրապետության մեջ.
17. Նույնը — թուքքերեն (մամուլի տակ և).
18. Մամուլի տակ և Կարմիր բանակալյինների և նըմնց ըն-  
տանիքների արտօնությունների մասին (որ, մատչ. պարզաբ.).